ՅԱ.

Ռուսիոյ զօրաշարժը դէպ ի Թուրքիա. — այս՝ առաջին մասով։

Վաւերագիրս կը հաղորդէ նաև որ Աւստրիոյ կայսրը մասնաւոր հրովարտակով կը վերցնէ կարգ մը Սուրբերու տօները, տալով այս բարձման պատճառները։ Ուրիշ կարգադրութիւններ ալ կ՚ընէ. սակայն այս ամէնէն՝ յառաջ կու գան նաև վէճեր ու դիմադրութիւններ մաճառներուն մէջ։

Գերապատիւ և գերյարգոյ տեառն տեառն Ստեփաննոսի վարդապետի
Արքաւոր մերում խոնարհական նամրոյր քղանցից

... Ցաւուրս յայսոսիկ լուայ յարժանահաւատ արանց, եթէ մոսկովք անցին զԹունան, և գնան պաշարել զվ̣իտինն, և յետ այնորիկ մնայ երթալ յէտրէնէն և ի ստամպօլ. բանակն Թուրքաց ցիր և ցան եղեալ փախստական գնան յերեսաց մոսկովին խումբ խումբ իբրև զերամակս եզանց. ուր հինգ հազար, ուր տասն հազար և ուր քսան հազար. և զայս պատմեցին ինձ ականատեսքն, ոյք գան ի ստամպօլոյ։ Պատմեցին ևս եթէ ոմանք տաճիկք ասացեալ են. էյէր քի մոսկով կիավուր կէլիրիսէ, պիզտա պիզիմ էվիմիզին քարշըսնտա պիրէր հաչ տիքէրըզ, իքիչէրտայ տօմուզ պօղազլարըզ, պիզտայ կիավուր օլուրըզ։ Ցոյժ վատ եւևի բանն Թուրքաց, զի յոյժ նուաճեաց զնա մոսկովն, պաշարելով զանցսն սեաւ ծովուն և ուռումէլիին. նաև որպէս լուայ փաշան մսրայ ապստամբեալ, առեալ է զերուսաղէմ, զդամասկոս և զշրջակայսն, և այժմ պաշարեալ է զհալէպն (աւա՜ղ ափսոս մեր ազգին, որ ոտից կոխան եղեալ նեղութիւնս մեծամեծս կրեն. յոյժ դանկութիւն է ի ստամպօլ և առաւել ևս լինելոց է...) խոնարհեալ ընկճեալ կան ամենայն տաճիկքն... մի միայն մխիթարութիւն մնացեալ է տաճկին նէմսէն, որ յոյժ բարեկամութիւն ցուցանէ նմա, տալով նմա զզահրէս, նաև յաւուրս յայսոսիկ տուեալ է նմա յիսուն հազար խանթար պարութ. և այժմ ևս երկու նաւք պարութով գնան ի տաճկաստան. ուստի ամենայն տաճիկքն զնա գովեն և ասեն. պիզիմ իմփռաթօրըն պիր կիւնի ալլահթալէ պին էթսին. գըլըճընի տուշմանընա գէսկին էթսըն. այլ որպէս թուի ի նշանաց, այս ամենայն վարդապետութիւն է, և ոչինչ գործէ մոսկովն առանց կամաց կայսեր, վասն զի նախ քան զանցանել մոսկովին զԹունան հրաման եկեալ էր առ զէմինու գոմէնտանդն, զի գոցի զայլ ճանապարհ փօշտայի՝ առանց գնալոյ ի ստամպօլ, ուրեմն գիտէր թէ մոսկովն անցանելոց էր զԹունան։ կայսրն միշտ ի պատրաստի կայ. հանապազ զօրքն առաքին աստ ի շրջակայս, և մանաւանդ, յառտիալն, և ի բերանս ամենեցուն է, եթէ պարտիմք առնուլ զպէլըրղատն. խորհուրդ թագաւորի է, և ոչ ոք կարօղ է իմանալ. զայս ծածուկ պահելս հնարեաց այժմու կայսրս, որ յոյժ օգտակար է իւրոյ թագաւորութեան, յաւուր միում խոստովանահայրն կայսեր հարցեալ ցկայսրն. եթէ զինչ խորհուրդ ունի յաղագս պատերազմին, որում տուեալ է պատասխանի կայսրն. կարօ(՞)ղ ես խորհուրդ պահել զի մի գիտասցեն այլք. ասէ խոստովանահայրն կարեմ պահել. պատասխանի ետ կայսրն և ասէ, կարեմ և ես խորհուրդ պահել, և ո՛չ ումեք յայտնել, և ոչ յայտնեաց նմա։ Ասեն եթէ մինչև չորս հարիւր հազար զօրք ունի այժմ ի պատրաստի ի վերայ ոտից...։ Զտօնս սրբոցն յայսմ ամի եբարց կայսրն յերկրէն իւրմէ. բաց ի տէրունական տօնից. և ի Ե տօնից աստուածածնայ, սրբոցն պետրոսի և պօղոսի և սրբոյն ստեփաննոսի նախավըկային և ամենայն սրբոց. ընդ տօնի սրբոցն պետրոսի և պօղոսի հրամայեաց և զամենայն առաքելսն տօնել, և ընդ նախավկային զամենայն մարտիրոսս. Ծնունդն Քրիստոսի Բ օր, Զատիկն Բ օր, Հոգեգալուստն Բ օր հրամայեաց տօնել։ Պատճառ բարձման տօնիցն է, զի յաւուրս տօնից առաւել մեղք գործին քան յայլ աւուրս. զի արհեստաւորք հազիւ սպասեն զի տօն լիցի. ոմանք պատարագ տեսանեն և ոմանք ոչ, և խկոյն գնան ի մե-